



ՏԵՂԵԿԱՆՔ

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՄԱՐԴՈՒ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

ՎԱՆԱԶՈՐ



2010

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2010 թվականի հատկապես հուլիս-նոյեմբեր ամիսներին զինված ուժերում տեղի ունեցան զինձառայողների մահացության, ինքնավնասման դեպքեր, որոնք լայնորեն լուսաբանվեցին լրատվական միջոցներով:

Միեւնույն ժամանակ բազմաթիվ անդրադարձեր եղան զինված ուժերում կանոնադրական հարաբերությունների, մարդու իրավունքների խախտումների եւ կոռուպցիոն երեւոյթների մասին, որոնք ստացան հասարակական մեծ հնչեղություն:

2010 թվականի սեպտեմբերի 7-ին ՀՀ ԱԺ պաշտպանության, ազգային անվտանգության եւ ներքին գործերի մշտական հանձնաժողովը կազմակերպեց հանրային լսում «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի նախագծի քննարկման նպատակով:

Նույն հանձնաժողովի կողմից 2010 թվականի հոկտեմբերի 8-ին կազմակերպվեց փակ լսում զինված ուժերի իրավիճակի վերաբերյալ, սակայն այդպես էլ հասարակությունը չիրազեկվեց քննարկման արդյունքների մասին:

2010 թվականի հոկտեմբերի 28-ին Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակում կազմակերպվեց «Զինված ուժերի առավել արդյունավետ քաղաքացիական վերահսկողություն իրականացնելու գործընթացում» ծրագրի արդյունքների ներկայացում, որում նույնպես համարժեք անդրադարձ չկատարվեց զինձառայողների մահվան դեպքերի եւ նրանց իրավունքների խախտման փաստերին:

Կարելուրեւով զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության խնդիրը, հաշվի առնելով, որ մահացության դեպքերի վերաբերյալ իրավապահ մարմինների կողմից հետեւողական գործողություններ չեն կատարվում հարուցված քրեական գործերի շրջանակներում՝ պատասխանատու անձանց բացահայտելու եւ նմանատիպ խախտումները կանխարգելելու ուղղությամբ, սույն տեղեկանքում ի մի են բերված, հատկապես 2010 թվականին զինված ուժերում մարդու իրավունքների



Խախտման փաստերը, կոռուպցիոն դրսեւորումները եւ պետական մարմինների գործողությունները՝ նպատակ ունենալով ձեւավորել հասարակական վերաբերմունք եւ պահանջ մարդու իրավունքների խախտումների կատարողների բացահայտման, պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

Տեղեկանքում ամփոփված են տպագիր եւ էլեկտրոնային լրատվամիջոցներով, ինչպես նաեւ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից ձեռքբերված տեղեկատվությունը:



ՄԱՍ 1

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ

ՄԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

2010 թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը բանակում տեղի է ունեցել զինծառայողների մահացության 42 դեպք՝ հրադադարի ռեժիմի խախտման, կանոնադրային հարաբերությունների խախտման, անվտանգության կանոնների խախտման, ինչպես նաև առողջական խնդիրների եւ դժբախտ պատահարների պատճառով:

Ա. Հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով

մահվան դեպքեր

2010 թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով մահացել է 9 զինծառայող, որոնցից մեկը Հայաստանի եւ Ադրբեջանի սահմանամերձ Տավուշի հատվածում, 8-ը՝ Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի բաժանարար գծում:

➤ Հայ-ադրբեջանական սահմանի վրա՝ Տավուշի մարզի Չինարի գյուղի մերձակայքում գտնվող մարտական հենակետում, 2010 թվականի մարտի 1-ին գրանցված հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով մահացել է 21127 զորամասի գնդացրային ջոկի հրամանատար, պայմանագրային զինծառայող, կրտսեր սերժանտ **Սարգիս Ոսկանյանը**¹:

➤ Հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով 2010 թվականի հունիսի 16-ին զոհվել է **Անուշավան Կիրակոսյանը**²:

➤ Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի բաժանարար գծում հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով միայն 2010 թվականի հունիս ամսին տեղի ունեցավ 5 զինծառայողի սպանության դեպք, որոնցից 4-ը հունիսի 18-ին ադրբեջանական հետախուզական խմբավորման ներխուժման հետևանքով: Ադրբեջանից ԼՂՀ տարածք ներխուժեց

¹ <http://www.lragir.am/armsrc/country32786.html>

² <http://www.aravot.am/am/articles/rights/80219/view>



ադրբեջանական զինված հետախուզական խմբավորում³: Մպանվեցին կրտսեր սերժանտ **Մնացական Գասպարյանը, շարքայիններ՝ Արայիկ Բարսեղյանը, Էդվարդ Մանուկյանը և Պարույր Մելքոնյանը**⁴:

➤ 2010 թվականի սեպտեմբերի 17-ին Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի բաժանարար գծում հրադադարի ռեժիմի խախտման հետեւանքով սպանվել է ժամկետային զինծառայող, էֆրեյտոր **Անդրանիկ Մարգարյանը**⁵:

➤ 2010 թվականի հոկտեմբերի 14-ին ժամը 19:00-ի սահմաններում Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի բաժանարար գծում հրադադարի ռեժիմի խախտման հետեւանքով սպանվել է 1988 թ. ծնված **Վիտայի Բզիթյանը**⁶:

➤ 2010 թվականի հոկտեմբերի 26-ին ժամը 16:45-ի սահմաններում Լեռնային Ղարաբաղի Սարտակերտի հատվածում հրադադարի ռեժիմի խախտման հետեւանքով զոհվել է շարքային զինծառայող **Հարութ Գրիգորյանը**⁷:

Բ. Անվտանգության կանոնների խախտման հետեւանքով

մահացության դեպքեր

➤ 2010 թվականի հոկտեմբերի 2-ին Կապան քաղաքի մերձակայքում զինվորներ տեղափոխող բեռնատար մեքենայի շրջվելու հետեւանքով մահացել է Հրազդան քաղաքի բնակիչ, ժամկետային զինծառայող **Հարություն Բրստյանը**⁸:

Վիրավորների կամ վնասվածքներ ստացած այլ զինծառայողների մասին տեղեկություն չի տարածվել:

➤ 2010 թվականի հոկտեմբերի 12-ին Լեռնային Ղարաբաղում գիշերային գորավարժությունների ժամանակ մարտական տանկի շրջվելու հետեւանքով մահացել է

³ <http://www.lragir.am/armsrc/country36040.html>

⁴ <http://www.lragir.am/armsrc/country36098.html>

⁵ <http://www.a1plus.am/am/official/2010/09/17/border>

⁶ <http://www.hraparak.am/2010/10/15/hay-zinvore-mahacele-adrbejancu-gndakic/>

⁷ <http://tert.am/am/news/2010/10/26/soldierkilling/>

⁸ <http://www.zhamanak.com/news/12280/>



1988թ. ծնված ժամկետային զինծառայող **Գևորգ Մանուկյանը** (դուրս էր ընկել տանկի դիտահորից եւ մահացել) ⁹:

➤ 2010 թվականի հոկտեմբերի 23-ին Արգնիի վարժական կենտրոնում բարձրությունից ցատկելու վարժության ժամանակ զոհվել է Նուբարաշենի հատուկ նշանակության զորամասի մի սպա¹⁰:

Նշված դեպքերի պատճառների մասին որեւէ լրացուցիչ տեղեկատվություն չի ներկայացվել լրատվական միջոցներին:

Գ. Ինքնասպանության դեպքեր

➤ 2010 թվականի հունիսի 10-ին իրեն ամրակցված զենքով գլխին կրակելու միջոցով ինքնասպան է եղել Վրաստանի հետ սահմանը հսկող ստորաբաժանման զինվոր, ազգությամբ հույն, Լոռու մարզի Գուգարք գյուղի 19-ամյա բնակիչ **Վալերի Շոնովը**: Նա ինքնասպան է եղել ծառայակից ընկերոջ հետ զորամասից Վրաստանի սահմանագոտի հերթապահության մեկնելու ճանապարհին: Շոնովը նամակ է թողել, որտեղ հայտնել է, որ ծառայակից ընկերն իր ինքնասպանության գործում մեղավոր չէ, եւ որ ինքը դա արել է Նոյեմբերյանի տարածաշրջանի խանութներում ունեցած իր պարտքերի պատճառով¹¹:

➤ 2010 թվականի սեպտեմբերի 8-ին առավոտյան ժամը 9:30-ի սահմաններում Վայքի զորամասերից մեկում ինքնասպանություն է գործել Վայքի բնակիչ, իրային գույքի պահեստապետ, պայմանագրային զինծառայող, կրտսեր սերժանտ **Արթուր Հակոբյանը**:

Արթուր Հակոբյանն ինքնասպան է եղել պահակագործի անդամներից մեկի զենքով: Նա խնդրել է պահակագործի անդամին, որ օգնի ինչ-որ արկղ տեղափոխել: Վերջինս էլ համաձայնել է, զենքը հենել է պատին, որ օգնի Արթուրին: Արթուրն էլ արագ վերցրել է զենքն ու միանգամից կրակ բացել իր վրա, ինչից հետո տեղում մահացել է:

⁹ <http://www.a1plus.am/am/politics/2010/10/14/senor-hasratyan>

¹⁰ <http://www.aravot.am/am/articles/regions/84804/view>

¹¹ <http://www.tesankyun.am/society/237-blub-s-u-e.html>



ՀՀ պաշտպանության նախարարության 8-րդ կայազորային քննչական վարչությունում հարուցվել է քրեական գործ ՀՀ Քրեական օրենսգրքի 110 հոդվածի 1 մասի /ինքնասպանության հասցնելը/ հատկանիշներով¹²:

Նշանակվել է համալիր դատաբժշկական, դատաբալիստիկական և դատահետքաբանական փորձաքննությունների անցկացում¹³:

Ի դեպ, մոտ մեկ տարի առաջ այդ նույն գորամասում ծեծի արդյունքում մահացել էր նաև ժամկետային զինծառայող Արամ Մկրտչյանը: Օգոստոսի 28-ին, առավոտյան ժամը 6-ից 6.45-ն ընկած ժամանակահատվածում Վայքի գորամասի վաշտի հրամանատար Անդոկ Գասպարյանը դաժան ծեծի էր ենթարկել Գեղարքունիքի մարզի Վերին Գետաշեն գյուղի բնակիչ երեք ամսվա զինծառայող Արամ Մկրտչյանին, ինչի հետևանքով տղան տեղափոխվել էր պաշտպանության նախարարության կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ, որտեղ վիրահատվել էր, սակայն բժիշկներին չէր հաջողվել փրկել նրա կյանքը: Սեպտեմբերի 1-ին զինծառայողը մահացել էր:

ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայության 8-րդ կայազորային քննչական բաժնում օգոստոսի 28-ին ՀՀ քրեական օրենսգրքի 375 հոդվածի 2-րդ մասով (պաշտոնական դիրքի չարաշահում եւ իշխանազանցություն, որն առաջացրել է ծանր հետևանքներ) քրեական գործ էր հարուցվել Անդոկ Գալստյանի նկատմամբ: Հաջորդ օրը կապիտան Գալստյանը ձերբակալվել էր: Սպան խոստովանել էր մեղքը, բայց եւ խնդրել, որ ծեծված երիտասարդին ենթարկեն դատաբժշկական փորձաքննության եւ հաստատեն, որ 18-ամյա երիտասարդը մահացել է հատկապես իր հասցրած հարվածների հետևանքով¹⁴:

Գ. Կանոնադրային հարաբերությունների խախտման հետևանքով

մահացության դեպքեր

2010 թվականի հունվար 1-ից մինչև դեկտեմբերի 31 -ը բանակում գրանցվել է կանոնադրային հարաբերությունների խախտման հետևանքով մահացության 23 դեպք:

Չնայած որոշ դեպքերում, ըստ պաշտոնական վարկածի, մահացության դեպքերը վերագրում են հանկարծակի մահվան կամ ինքնասպանության, սակայն

¹² <http://www.hraparak.am/2010/09/09/hertakan-ionqnaspanutyune-banakum>

¹³ «Առավոտ» օրաթերթ, 10.09.2010

¹⁴ <http://zhamanak.com/article/15977/>



բազմաթիվ ոչ պաշտոնական տվյալներ վկայում են, որ այդ մահացության դեպքերը տեղի են ունեցել ներքին կանոնակարգի խախտման պատճառով:

➤ 2010 թվականի փետրվարի 1-ին Կուբաթլուում մահացել է Մարմարաշեն գյուղի բնակիչ, 1989թ. ծնված Ժամկետային զինծառայող **Անդրանիկ Սարգսյանը:**

Զինվորի մահվան հանգամանքների մասին սկզբում տարբեր ենթադրություններ են ներկայացվել: Առաջին, հարազատներին հայտնել են, որ Ա. Սարգսյանը մահացել է թունավորումից, երկրորդ, հայտնել են, որ մահվան պատճառ է հանդիսացել ստամոքսի խոցը, երրորդ, ՀՀ պաշտպանության նախարարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունը հայտնել է, որ Ա. Սարգսյանի մահվան պատճառը սրտամկանի հանկարծակի առաջացած հիվանդությունն է, որը հաստատվում է դիախերձման ժամանակ սրտամկանում հայտնաբերված օջախային փոփոխություններով:

Ա. Սարգսյանը 4 ամիս ծառայելուց հետո 2010 թվականի հունվարի 30-ին, ըստ գործի նյութերի, դիմել է գործառնաբերության՝ բողոքելով որովայնի շրջանում անհանգստացնող ցավերից: Զորամասի բժիշկ Ա. Ավայանը նրա մոտ ախտորոշել է «աղեստամոքսային տրակտի ֆունկցիոնալ խանգարում» և նշանակել համապատասխան բուժում: Երկու օր բուժում ստանալուց հետո, Ա. Սարգսյանի առողջական վիճակը վատացել է և փետրվարի 1-ին, Ավայանը՝ տեսնելով, որ Անդրանիկը մահամերձ է, տեղափոխել է նրան Միսիանի զինվորական հոսպիտալ, սակայն Ա. Սարգսյանը ճանապարհին մահացել է¹⁵:

Դատաբժշկական եզրակացությամբ՝ Ա. Սարգսյանի մոտ արձանագրվել է. «գլխի աջից վերհոնքային շրջանի և ճակատային շրջանի քերծվածքներ, կրծքավանդակի շրջանի և աջից գոտկային շրջանի քերծվածքներ, աջից և ձախից հետույքային շրջանների քերծվածքներ, որոնք պատճառվել են կենդանության օրոք բույժ առարկաներով, մահվանից կարճ ժամանակ առաջ»:

Գործով զբաղվող քննիչ Խալաթյանը չի պարզել, թե որոնք են Ա. Սարգսյանի մոտ նշված վնասվածքների պատճառները: Նա փորձել է «ապացուցել», թե իբր վնասվածքներն առաջացել են Սարգսյանին «ՈՒԱԶ» մակնիշի ավտոմեքենայով հոսպիտալ տեղափոխելու ճանապարհին:

Հարազատները պնդում են, որ քննիչը հաշվի չի առել, որ Անդրանիկի հագին եղել է «բուշլատ» և ձմեռային զինվորական տաբատ, որոնք անհետացել են և չեն ուղարկվել փորձաքննության: Դրա փոխարեն քննիչը համոզել է դատաբժիշկ Բիշարյանին ցուցմունք տալ,

¹⁵ <http://www.armtown.com/news/am/zam/20100923/16080>



և վերջինս հնարավորինս կոծկել է վնասվածքների դրվագը՝ կտրվածքները քերծվածքներկայացնելով: Ըստ նույն եզրակացության՝ Ա. Սարգսյանը մահացել է «աթերոսկլերոզ» հիվանդությունից: Այսինքն, հակասություններ կան նաև փորձագիտական եզրակացություններում:

Առողջապահության նախարարության հանրապետական դատաբժշկական գիտագործնական կենտրոնի աշխատակից Բիշարյանը դատաբժշկական եզրակացության մեջ նշել է նաև, որ Անդրանիկի մոտ հայտնաբերվել է որովայնի շրջանի ներքին արյունահոսություն, որի առաջացման պատճառների մասին, սակայն, դատաբժիշկ Բիշարյանը լռում է:

Քննիչ Խալաթյանը նշում է նաև, որ նյութերի նախապատրաստման ընթացքում կատարված դատաբժշկական փորձաքննության արդյունքում հաստատված է Ա. Սարգսյանի մահվան պատճառը՝ սրտանոթային հիվանդություն, որն առաջացել է մոտ 5-6 ամիս առաջ:

Սակայն ծնողները նշում են, որ դա այն ժամանակահատվածն է, երբ Անդրանիկը գորակոչվել է բանակ, եւ, ըստ ծնողների, Ա. Սարգսյանը եղել է առողջ, այլապես նրան չէին գորակոչի:

9-րդ կայագորային քննչական բաժինը՝ հիմնվելով անցկացված դատաբժշկական փորձաքննության արդյունքների վրա, ըստ որի, զինծառայողը այս տարվա փետրվարի 1-ին մահացել է սրտանոթային հիվանդությունից, մահվան փաստի առիթով քրեական գործ չի հարուցել՝ հանցակազմի բացակայության պատճառով:

Հարագատների տեղեկությունները տարբերվում են պաշտոնական տվյալներից:

Ըստ Անդրանիկի հոր տվյալների՝ Ա. Սարգսյանի հետ նույն գորամասում ծառայում էր նաև եղբայրը, որն ասել էր, որ հունվարի 30-ին կոռու վազելուց հետո եղբայրն անհետացել է եւ մոտ 1 ժամ նա չի կարողացել գտնել նրան: Հետո ծառայող զինվորներից մեկը հայտնել է, որ Անդրանիկը վատ է իրեն զգում, բայց բժիշկը ոչ մի օգնություն ցույց չի տալիս՝ պահանջելով նախ բերել վաշտի գրքույկը: Եղբոր հավաստմամբ Անդրանիկը 2 օր պառկել է սանչաստում: 2 օր հետո եղբայրը տեսել է, որ Անդրանիկը գույնը լրիվ գցել է: Բժշկին կանչել են և հրամանատարի մեքենայով Անդրանիկին տեղափոխել Միսիանի հոսպիտալ, սակայն ճանապարհին Անդրանիկը մահացել է:

Բոլոր վերոնշյալ հանգամանքները՝ հիվանդին ժամանակին բուժօգնություն չցուցաբերելը, մարմնական վնասվածքները թաքցնելը, ծեծողին չհայտնաբերելը, հիմք են



տալիս հարազատներին եզրակացնելու, որ տեղի է ունեցել սպանություն:

Հարազատները մեղադրում են զորամասի հրամանատար Կոմիտաս Դավթյանին եւ բուժօժանայության պետ Ավայանին, որոնք, սակայն, մինչ օրս շարունակում են ծառայել¹⁶:

➤ 2010 թվականի մարտի 14-ին Լեռնային Ղարաբաղի Հայկազովի զորամասում մարզաձողից կախված վիճակում հայտնաբերվել է 3 ամսվա շարքային զինծառայող, Արմավիրի մարզի Սարդարապատ գյուղի բնակիչ **Վալերի Մուրադյանի** դին: Մարզաձողը, որից կախված է եղել Վ. Մուրադյանի դին, ունի 149 սմ բարձրություն, իսկ Վ. Մուրադյանի հասակը եղել է 180 սմ: Ըստ պաշտոնական վարկածի՝ զինծառայողը ինքնասպան է եղել:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ինքնասպանության հասցնելու մեղադրանքով:

Ըստ նախաքննության առաջ քաշած վարկածի՝ վեճի շարժառիթը «Nokia» հեռախոսի արժեքի վճարման մասին անհամաձայնություններն են եղել: Վ. Մուրադյանին 4 հոգի սպառնացել են նվաստացնել, վարկաբեկել, ընդհուպ սեռական բռնության ենթարկել, եթե մինչև նույն օրվա ժամը 24:00 -ն 2.000 դրամ չբերի: Քրեական գործով պարզվել է, որ այդ 4 հոգին մարտի 14-ին, ժամը 24:00-ին գնացել են տեսնելու Մուրադյանին եւ գտել են նրան կախված վիճակում:

Հարազատները մերժում են պաշտոնական վարկածը եւ գտնում, որ իրենց որդուն սպանել են, քանի որ որդու մարմնի վրա առկա են եղել բռնության հետքեր, որը չի արձանագրվել դատաբժշկական եզրակացության մեջ:

Ծնողների պնդմամբ Մուրադյանի մարմնի վրա տարբեր մասերում կապտուկներ են եղել, թեւերի տակ, թեւերի եւ վզի վրա մատնահետքեր են եղել, քիթն էլ ճզմված է եղել: Ծնողները հակված են մտածելու, որ իրենց որդուն խեղդել են, քանի որ վզի վրա պարանի հետքեր են հայտնաբերել:

Տուժողի իրավահաջորդի շահերը ներկայացնող փաստաբան Սեդա Սաֆարյանը մի քանի ամիս առաջ միջնորդություն է ներկայացրել նախաքննական մարմնին՝ պահանջելով մեղադրանքներ առաջադրել քննությամբ հայտնի այն 4 անձանց նկատմամբ, ովքեր դեպքի օրը «ռազբորկայի» մեջ են եղել Վ. Մուրադյանի հետ, ինչպես նաեւ օրվա պատասխանատուներին: Այդ միջնորդությունը, սակայն, դեռեւս քննության չի առնվել:

¹⁶ <http://www.armtown.com/news/am/zam/20100923/16080/>



Սաֆարյանը մի շարք կարեւոր հարցեր է բարձրացրել՝ պահանջելով հնարավորինս իրականացնել պահանջվող քննչական գործողություններ: Միջնորդության մեջ փաստաբանը հետեյալ հարցերին է անդրադառնում. առաջինը, դեպքի կատարման ժամին զորանոցում արթուն են եղել հերթապահ սերժանտը եւ օրապահ զինվորը, որոնք կարող են կարեւոր տեղեկություններ հաղորդել: Երկրորդը, գործի նյութերը հուշում են, որ հստակ դերաբաշխում է եղել 4 անձանց միջեւ, նրանք գործել են միասնական դիտավորությամբ: Երրորդը, դեպքի վայրում հայտնաբերվել է 49 սմ բարձրության աթոռ: Որպես կանոն զորանոցում բոլոր աթոռները համարակալված են եւ դրված համապատասխան մահճակալի դիմաց: Ըստ գույքահարկի հնարավոր է պարզել, թե կոնկրետ որ զինձառայողին հատկացված աթոռն է գնվել դեպքի վայրում, եւ հերթապահող օրապահը պարտավոր էր նկատել աթոռը դուրս տանող անձին ու դուրս տանելու կոնկրետ ժամանակը: Այսինքն, եթե պարզվի, որ այդ աթոռը չի պատկանում Վ. Մուրադյանին, ապա առաջ է գալիս այլ անձի կամ անձանց կողմից ծրագրած եւ իրականացրած սպանության վարկածը:

Դեպքի վայրում հայտնաբերվել է նաեւ 4 անձանցից մեկին պատկանող գոտին, եւ պետք է պարզել, թե ինչպես է այդ գոտին հայտնվել այդտեղ:

Ըստ ոչ պաշտոնական աղբյուրի՝ դեկտեմբեր ամսվա սկզբի դրությամբ խմբի անդամները պահվում են զինվորական ոստիկանությունում, որոնց հետ քննչական գործողություններ են իրականացվում¹⁷:

➤ 2010 թվականի ապրիլի 23-ին Երեւանում գտնվող զորամասերից մեկում զենքի հետ վարվելու կանոնների խախտման հետեւանքով մահացել է վանաձորցի երիտասարդ սպա **Տիգրան Ֆրանկյանը**:

Դեպքի վերաբերյալ հարուցվել է քրեական գործ անզգույշ սպանության հիմքով, եւ մեղադրանք է առաջադրվել Տ. Ֆրանկյանի հետ ծառայող մեկ այլ սպայի:

Դեպքի վերաբերյալ որեւէ պաշտոնական հաղորդագրություն չի տարածվել¹⁸:

➤ 2010 թվականի հունիսի 16-ին Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի զորամասերից մեկում մահացել է երեւանաբնակ 22-ամյա ժամկետային զինձառայող, սերժանտ **Արման Ավագյանը**:

¹⁷ <http://www.lragir.am/armsrc/country39353.html>;
<http://lragir.am/armsrc/right41601.html>

¹⁸ ՀԲԱ Վանածորի գրասենյակի ստացված տեղեկություն



Դեպքի հետ կապված ՀՀ պաշտպանության նախարարությունը որևէ հաղորդագրություն չի տարածել:

Ոչ պաշտոնական տվյալների համաձայն՝ 13-ամսյա ժամկետային զինծառայող Արման Ավագյանը դեպքի օրը գտնվել է դիրքերում: Հրամանատար Վահե Հովնիկյանը այցելել է եւ տեսել, որ Արմանը կանգնած է դիտակետից մի քանի մետր այն կողմ: Վիճաբանություն է սկսվել, եւ 25-ամյա հրամանատարը զենքի խզակոթով հարվածել է զինվորի գլխին, որի հետեւանքով վերջինս վայր է ընկել, գլուխը խփել քարին եւ մահացել:

Դեպքի ժամանակի վերաբերյալ կան տարաձայնություններ: Արման Ավագյանի հայրը՝ Արսեն Ավագյանը, նշում է, որ դեպքը եղել է ժամը 12-ին, այլ աղբյուրներ նշում են՝ ժամը 10-ը¹⁹:

Մեկ այլ տեղեկատվության համաձայն՝ զորամասի հրամանատարի սպառազինության գծով տեղակալը՝ նկատելով, որ հերթապահը դիրքերում չէ, դիտողություն է անում դասակի հրամանատար Վահե Հովնիկյանին, վերջինս ճշտելով, որ այդ դիրքում պետք է լինի Ա. Ավագյանը, մոտ է կանչում նրան, հարվածում, ինչից վերջինս գլխով հարվածում է երկաթե տունե սալիկին եւ տեղում մահանում:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ:

Իսկ գումարտակի հրամանատարի անձնակազմի հետ տարվող աշխատանքի գծով տեղակալ, մայոր Բ. Մելքումյանը եւ շտաբի պետ, մայոր Ա. Գալստյանը զորացրվել են²⁰:

➤ 2010 թվականի հունիսի 16-ին նորակոչիկ **Երվանդ Սարգսյանի** դին հայտնաբերվել էր ջրատար խողովակի մեջ:

Լեռնային Ղարաբաղի Պաշտպանական բանակի Այգեստանի (նախկինում Բալուջա) թիվ 37447 զորամասի զինծառայող, 2010 թվականի մայիսի 12-ին Արմավիրի զինկոմիսարիատից զորակոչված Երվանդ Սարգսյանը, ըստ դատաբժշկական փորձաքննության արդյունքների, մահացել է մեխանիկական շնչահեղձությունից՝ շնչառական ուղիների հեղուկով փակվելու-ջրահեղձման հետեւանքով:

Ըստ պաշտոնական տվյալների՝ հուլիսի 16-ին ժամը 09:00-ի սահմաններում Երվանդ Սարգսյանը վաշտի մյուս նորակոչիկների հետ գնացել է զորամասի հարակից մարտավարական արգելքների հաղթահարման դաշտ: Պարապմունքներն ավարտելուց հետո, ժամը 10:00-ի սահմաններում մի խումբ նորակոչիկներ (6 հոգի) լողանալու նպատակով մտել

¹⁹ <http://www.hraparak.am/2010/08/04/dardzyal-hramanatarn-e-hoshotel-zinvorin/>

²⁰ <http://www.hraparak.am/2010/10/01/hayoc-banak-tuyil-oxaknere-patjvelen/>



են մոտակա գետի կողքին գտնվող ջրավազանը: Երվանդ Սարգսյանը, ջրի մակարդակը բարձրացնելու նպատակով, մեջքով փակել է ջրավազանում գտնվող ջրատար խողովակի բերանը, որի ընթացքում խողովակում առաջացած բարձր ճնշման հետեւանքով կլանվել է ջրատար խողովակի մեջ եւ ջրասույգ եղել:

Փաստի առթիվ 2010 թվականի հունիսի 28-ին ՀՀ Պաշտպանության նախարարության քննչական ծառայության 1-ին կայագորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 376 հոդվածի 2-րդ մասով (անփույթ վերաբերմունք ծառայության նկատմամբ, եթե անզգուշությամբ առաջացրել են ծանր հետեւանքներ):

2010 թվականի օգոստոսի 25-ին գորամասի վաշտի հրամանատար, ավագ լեյտենանտ Կարեն Առուշանյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 376 հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով եւ նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է ստորագրություն չհեռանալու մասին:

Երվանդ Սարգսյանի հարազատները չեն հավատում պաշտոնական վարկածին: Երվանդ Սարգսյանի հայրը՝ Մանուկ Սարգսյանը, դեպքից հետո մեկնել է Լեռնային Ղարաբաղ, եղել է դեպքի վայրում, անձամբ է կատարել տարբեր դիտարկումներ, եւ համոզված է, որ պաշտոնական վարկածը սխալ է:

Ըստ գործի նյութերի՝ Երվանդ Սարգսյանը մեջքով փակել է ջրավազանում գտնվող 500 մմ տրամագծով արագահոս ջրատար խողովակի բերանը, սակայն Երվանդի հայրը իր դիտարկումների ժամանակ չափել է այդ խողովակի բերանը, որն ունեցել է 700 մմ տրամագիծ:

Մանուկ Սարգսյանը եղել է նաեւ գորամասում, զրուցել է դեպքի վայրում ներկա գտնվող զինծառայողների հետ, որոնք, ըստ հոր, եղել են վախեցած, եւ ոչինչ չեն ասել, միայն նշել են հետեւալը. «Սպաները ինչ ասում են, այդպես էլ եղել է»:

Հարազատները նշում են, որ, երբ Երվանդին հանել են խողովակից, նրա ոտքերին փաթաթված են եղել գոտիներ: Հարազատների այն հարցին, թե դրանք ինչպես են հայտնվել, զինվորները պատասխանել են, որ, երբ իրենք նկատել են, որ Երվանդին խողովակի ջուրը քաշում է, իրենք իրենց գոտիները հանել են, որպեսզի դուրս քաշեն Երվանդին, բայց չկարողանալով օգնել, նրանք բաց են թողել գոտիները, որոնք էլ փաթաթվել են նրա ոտքերին:

Հարազատները նշում են, որ Երվանդի մեջքի վրա, ականջի հետեւի մասում եղել են քերծվածքներ, կապտուկներ, իսկ արմունկը եղել է ջարդված: Այնպիսի տպավորություն է, որ Երվանդին քարշ են տվել:



Հարազատների համար անհասկանալի է նաև այն, թե ինչու պետք է իրենց որդին առավոտյան ժամին մտներ լողավազան, եթե 2 օր առաջ ինքը եղել է հիվանդ եւ բուժում է ստացել գորամասի բուժմասում: Երվանդ Սարգսյանի հայրը նշում է նաև, որ երբ ինքը գտնվելիս է եղել այդ լողավազանում, այնտեղ առավոտյան ժամերին ջուրն այնքան սառն է լինում, որ մարդ չի կարող այդ ջրի մեջ մի քանի րոպեից ավելի մնա:

Տուժողի իրավահաջորդ ճանաչվել է Երվանդ Սարգսյանի հայրը՝ Մանուկ Սարգսյանը:

Քննիչը Մանուկ Սարգսյանին չի տրամադրել գործի նյութերը: Գումար չունենալու պատճառով հարազատները չեն կարողացել պաշտպան ներգրավվել, պաշտպան ներգրավվել է Լեոնային Ղարաբաղից քննիչի միջնորդությամբ:

Փաստի առթիվ նախաքննությունն ավարտվել է եւ գործն ուղարկվել է ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան²¹:

➤ 2010 թվականի հուլիսի 27-ին Տավուշի մարզի 21127 գորամասում, ըստ ՀՀ պաշտպանության նախարարության հաղորդագրության, ինքնաձիգի կրակոցից ինքնասպան է եղել 1979 թ. ծնված պայմանագրային զինծառայող, հենակետի ավագ **Արտակ Նազարյանը**:

Ա. Նազարյանին ինքնասպանության հասցնելու փաստի առթիվ ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայության 6-րդ կայազորային քննչական բաժնում ՀՀ Քրեական օրենսգրքի 110 հոդվածի 1-ին մասով հարուցված քրեական գործի շրջանակներում 375 հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության կատարման կասկածանքով ձերբակալվել է թիվ 21127 գորամասի 1-ին գումարտակի ԱՀՏԱ գծով տեղակալ, կապիտան Հակոբ Խորենի Մանուկյանը՝ պաշտոնական լիազորությունների սահմանն անցնելով Ա. Նազարյանին ծեծի ենթարկելու, նրա պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելու համար:

Նույն գործի շրջանակներում ՀՀ քրեական օրենսգրքի 358 հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հանցագործության կատարման կասկածանքով ձերբակալվել են 21127 գորամասի պարտադիր ժամկետային զինծառայողներ, շարքայիներ Մխիթար Մխիթարյանը, Ադիբեկ Հովհաննիսյանը, Հարութիկ Կիրակոսյանը՝ Ա. Նազարյանի նկատմամբ բռնություն գործադրելու, նրա պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելու համար²²:

Ըստ պաշտոնական վարկածի՝ հուլիսի 27-ին առավոտյան ժամը 07:50-ին, բլինդաժից մոտ 250 մետր հեռավորությունից համաձայնողները կրակոցի ձայն են լսել և վազել այդ

²¹ http://www.hcav.am/articles.php/language_arm/date_2010-11-27/article_3863/page.html

²² <http://www.hrparak.am/2010/08/05/banakum-bespredel-dataxazutyunum-cackadmboc/>



ուղղությամբ: Տեղ հասնելով՝ նրանք տեսել են մահացած Ա. Նազարյանին ինչ-որ ժայռաբեկորին հենված՝ իրեն ամրակցված զենքը կողքին²³:

Ա. Նազարյանի դիախերձման ժամանակ հայտնաբերվել են բռնության հետքեր, այդ թվում դեմքի վրա կիսալուսնաձև վնասվածքներ, իսկ թևերի վրա հայտնաբերված վնասվածքները բնորոշվել են որպես բուժ առարկայով հասցված: Բոլոր վնասվածքները ստացվել են կենդանության օրոք՝ մահվանից 6 ժամ առաջ, ինչը, բնականաբար, խոսում է այն մասին, որ Պաշտպանության նախարարության առաջ քաշած ինքնասպանության վարկածը իրականության հետ որևէ առնչություն չունի²⁴:

Ըստ փորձաքննության արդյունքների՝ Արտակ Նազարյանի մահը վրա է հասել «գլխուղեղի կենսական կարեւոր ֆունկցիաների սուր խանգարումից, որը պայմանավորված է եղել գլխի հրազենային գնդակային թափանցող, միջանցիկ վիրավորումով՝ մուտքի անցքը տեղակայված է բերանի խոռոչում՝ քիմքի շրջանում, ելքինը՝ ձախ կողմնա-ծոծրակային շրջանում»: Այդ վիրավորումը ստանալուց հետո մահը վրա է հասել անմիջապես, հետեւաբար այդ վնասվածքը ստանալուց հետո Նազարյանը ինքնուրույն գործողություն կատարելու հնարավորություն չի ունեցել, իսկ մնացած վնասվածքների դեպքում, ըստ փորձաքննության արդյունքների, կարող էր կատարել ինքնուրույն գործողություններ՝ շարժվել, քայլել, բղավել²⁵:

Եվս մեկ հանգամանք, որ ուշադրության պետք է արժանանա. դա այն է, որ վնասված է Արտակ Նազարյանի լեզուն («հրազենային վնասվածքի հետեւանքով առաջացած անցք»): Ինքնասպանություն գործելիս լեզուն բարձրացնել, փողը դնել նոր կրակել՝ մի քիչ անընդունելի իրավիճակ է: Իսկ եթե լեզուն չի բարձրացրել, փողը մտցրել է մինչև կոկորդ՝ սրանք լրիվ տարբեր իրավիճակներ են, եւ լեզվի վրա պետք է որ հրազենային անցք չլիներ:

Արտակ Նազարյանի հարազատները չեն հավատում պաշտոնական վարկածին:

Ըստ պաշտոնական վարկածի՝ Նազարյանն ինքնասպան է եղել նստած վիճակում՝ քարին հենված, մինչդեռ այդ քարի վրա անգամ արյան հետքեր չեն հայտնաբերվել²⁶:

Ա. Նազարյանի որպես տուժողի իրավահաջորդի շահերը ներկայացնող փաստաբաններ Սեդա Սաֆարյանը եւ Մուշեղ Շուշանյանը միջնորդություն են ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայության հատուկ կարելորագույն

²³ <http://www.lragir.am/armsrc/country37272.html>

²⁴ <http://www.lragir.am/armsrc/country37243.html>

²⁵ <http://www.armtimes.com/17411>

²⁶ <http://www.azatutyun.am/content/article/2170424.html>



գործերով քննիչ Լ. Պետրոսյանին՝ պահանջելով տրամադրել դեպքի վայրի արձանագրությունը, Ա. Նազարյանի հազուստի զննման արձանագրությունը՝ դրան կից հավելվածներով (առկայության դեպքում), ինչպես նաև տրամադրել այդ արձանագրությունների լուսապատճեններ, առկայության դեպքում՝ դրանց կից սխեմաների լուսապատճենները և լուսանկարների կրկնօրինակներ:

Չնայած նրան, որ մինչ այժմ փաստաբանների կողմից ներկայացված բոլոր միջնորդությունները մերժվել են, այս անգամ փաստաբանները խնդրել են նաև միջնորդությունն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու դեպքում, պարզաբանել, թե ինչ իրավաչափ նպատակ է հետապնդում միջնորդության մերժումը²⁷:

- 2010 թվականի հուլիսի 28-ին Լեռնային Ղարաբաղի Մարտունի 2-րդ թիվ 56534 մարտական դիրքերում հրազենային կրակոցներից մահացել են միանգամից 6 հոգի:

Ըստ պաշտոնական վարկածի՝ մարտական հերթապահության կանոնների կոպիտ խախտման հետևանքով ծագած միջադեպի պատճառով զոհվել են ավագ լեյտենանտ **Վարդգես Թադևոսյանը** և ժամկետային զինծառայողներ **Գարեգին Հովսեփյանը, Անդրանիկ Մարգարյանը, Ռոբերտ Հովհաննիսյանը, Արտյոմ Մանասյանը, Կարո Այվազյանը**²⁸:

Նույն պաշտոնական վարկածի համաձայն՝ ժամկետային զինծառայող Կարո Այվազյանը հրազենով սպանել է լեյտենանտին ու սերժանտին, այնուհետև դեպքի վայրին մոտեցած եւս 3 զինծառայողների ու վերջում ինքնասպան եղել²⁹:

Հարուցվել է քրեական գործ Քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով /«երկու եւ ավելի անձանց սպանություն»/: ՀՀ պաշտպանության նախարարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչության փոխանցմամբ, գործի քննության շրջանակներում կատարվել են անհետաձգելի գործողություններ՝ դեպքի վայրի եւ դիակների զննություն, նշանակվել են 6 դիակների դատաբժշկական փորձաքննություններ, ինչպես նաև թվով 10 դատաձգաբանական, թվով 3 դատակենսաբանական փորձաքննություններ, որպես վկաներ հարցաքննվել են մի խումբ պարտադիր ժամկետային ծառայության զինծառայողներ, սպաներ:

²⁷ <http://ragir.am/armsrc/right40417.html>

²⁸ <http://www.azatutyun.am/content/news/2114262.html>

²⁹ <http://www.azatutyun.am/content/article/2113838.html>



Նախաքննությունն իրականացնում է ՀՀ պաշտպանության նախարարության Քննչական վարչության պետի որոշմամբ ստեղծված քննչական խումբը³⁰:

Ղեկավարի հանգամանքների, դեպքի վայրում գտնվող մարդկանց թվի, դեպքի ժամանակի վերաբերյալ կան պաշտոնական վարկածից էապես տարբերվող տվյալներ:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ներկայացուցիչը եւ «Ժամանակ» օրաթերթի թղթակիցը հանդիպել են զոհվածների հարազատների հետ դեպքի որոշ մանրամասնություններ ուսումնասիրելու նպատակով:

- Այսպես, զոհված Արտյոմ (Արտեմ) Մանասյանի ծնողները դեպքի պահին գտնվել են Մոսկվայում: Որդու վիրավոր լինելու մասին լուրն իմացել են հուլիսի 27-ին 21:30-ի սահմաններում՝ ծանոթներից մեկի միջոցով: Ա. Մանասյանի մոր՝ Քնարիկ Մանասյանի խոսքերով, ինքը որդու հետ վերջին անգամ խոսել է հուլիսի 27-ին ժամը 15-ին: Արտյոմը նշել է, որ ինքը «պոստի» հերթափոխը հանձնել է եւ իջել ներքե՝ հանգստանալու: Ծնողների տեղեկություններով կրակոցների պահին Արտյոմը «բլինդաժից» դուրս՝ մերձակայքում նստած է եղել, կրակոցը դիպել է նրան, ինչից էլ նա գլխիվայր ընկել է գետնին³¹:

Չնայած մեկ օր հետո Ա. Մանասյանի մայրը հեռախոսով հայտնեց, որ շփոթել է օրերը եւ որդու հետ խոսել է ոչ թե հուլիսի 27-ին, այլ 28-ին եւ դեպքի մասին իմացել է հուլիսի 28-ի ժամը 21:30-ի սահմաններում:

- Ըստ սպանված Գարեգին Հովսեփյանի հարազատների՝ Գարեգինի մարմնի վրա ակնհայտ բռնության հետքեր են եղել: Ծնողների փոխանցմամբ ձեռքերի մատները կոտրված են եղել, գլխի այն հատվածի վրա, որտեղով անցնում է քներակը, առկա էր մեծ այտուց, ծոծրակի վրա սուր գործիքից առաջացած խորը վերք կար: Հովսեփյանի դիակի դիահերձումը տեւել է 5 ժամ, եւ հարազատներից ոչ մեկին թույլ չեն տվել ներկա գտնվել դիահերձմանը: Գ. Հովսեփյանի մայրը՝ Շողիկ Կիրակոսյանը չի հավատում պաշտոնական վարկածին, քանի որ, ըստ նրա, եթե զինծառայողների միջեւ բռնկվել է վեճ, Կարո Այվազյանը գնդակահարել է բոլորին, ապա ինչու պետք է կոտրեր Գարեգինի մատները:

Հարազատների համար մեկ հանգամանք եւս մնում է անհասկանալի. Գարեգինը, խոսելով ծնողների հետ, հայտնել է, որ դիրքերում հերթապահություն են անում 8 հոգի՝ 1 սպա,

³⁰ <http://www.azatutyun.am/content/news/2119556.html>

³¹ http://www.hcav.am/articles.php/language_arm/date_2010-08-12/article_3726/page.html;
<http://www.zhamanak.com/article/15713/>



7 զինձառայող: Եթե դեպքի հետեւանքով մահացել են 6 հոգի, ապա որտեղ էին այն 2 զինձառայողները, որոնք պետք է գտնվեին այդտեղ³²:

- Մեկ այլ սպանվածի՝ դասակի հրամանատար Վարդգես Թադեւոսյանի հարազատները հայտնում են, որ Վարդգեսը նախատեսվածից 5 օր շուտ՝ հուլիսի 23-ին է դիրքեր գնացել դասակի հետ միասին: Վարդգեսն իր պատասխանատվության տակ գտնվող դիրքերից մեկից իջել է գետնատնակ, որ գնա «պոստ», բայց հենց այդ ժամանակ, մոտավորապես 17:30-ին դեպքը պատահել է: Ծնողները վստահեցնում են, որ Վարդգեսը զինձառայողների, այդ թվում նաև Կարո Այվազյանի հետ ունեցել է լավ փոխհարաբերություններ:

Վարդգեսի դին Երեւան են բերել ծածկոցով փաթաթված, հագին՝ շապիկ: Դիակերձմանը մասնակցած Վարդգեսի հորեղբոր որդին նշում է, որ Վարդգեսի մարմնի վրա եղել են հրազենային մոտ 20 կրակոցի հետքեր (հիշեցնենք, որ մահվան մասին տեղեկանքում նշված էր՝ «կրծքավանդակի, որովայնի, աջ վերին վերջույթի գնդակային միջանցիկ կույր բազմաթիվ վիրավորումներ»): Վարդգես Թադեւոսյանի հարազատները նշում են, որ իրենք նախաքննական մարմնի ասածին չհավատալու հիմքեր չունեն³³:

- Սպանված Անդրանիկ Սարգսյանի հոր՝ Սարգիս Սարգսյանի խոսքերով, Մարտունի գորամասում ծառայող գնդապետ Գրիգորյանը եւ մեկ այլ փոխգնդապետ, որ ներկա էին եղել որդու հոգեհանգստի արարողությանը, անընդհատ կրկնել են գումարտակի հրամանատարի տեղակալ Հովհաննես Դանիելյանի անունը՝ որպես միջադեպի հեղինակի:

Գնդապետն ու փոխգնդապետն են Հ. Դանիելյանին ասել, որ դիրքերում հերթապահություն իրականացնող զինվորները քնած են, եւ Դանիելյանը սկսել է քնած զինվորների մասին հայհոյանքներ տեղալ՝ ասելով, որ կգնա դիրքեր եւ նրանց կարգի կհրավիրի:

Սարգիս Սարգսյանը ենթադրում է, որ հենց Հ. Դանիելյանն է սկսել դաժան ծեծի ենթարկել զինձառայողներին, քանի որ գորամասի զինվորներներից մեկը պատմել է, թե դեպքի օրը լսել է «Ինչ եք անում» բղավոց: Սարգիս Սարգսյանը նշում է, որ որդու գործով նյութերի մեջ

³² http://www.hcav.am/articles.php/language_arm/date_2010-08-05/article_3715/page.html; <http://www.armtimes.com/15348>

³³ http://www.hcav.am/articles.php/language_arm/date_2010-08-28/article_3734/page.html; <http://www.zhamanak.com/article/15855/>



ինքը տեսել է աշխատանքից ազատվածների 4 հոգանոց ցանկ, որի մեջ կային նաև Հովհաննես Դանիելյանի եւ գնդի հրամանատար Ֆելիքս Բաղդասարյանի անունները³⁴:

Անդրանիկ Սարգսյանի մոր՝ Սվետլանա Կարապետյանի խոսքերով, ինքը որդու հետ խոսել է դեպքի օրը՝ հուլիսի 28-ին ժամը 18:20-18:50-ի սահմաններում: Որդին ասել է, որ դիրքերում է եւ որ ամեն ինչ նորմալ է: Հատկանշական է, որ հեռախոսազանգի ցուցակի մեջ այդ ժամանակահատվածի զանգը ֆիկսված չէ:

Սվետլանա Կարապետյանը նշում է նաև, որ ինքը հանդիպել է նույն զորամասի նախկին ժամկետային զինծառայողին, որն ասել է, որ լուրեր էին պտտվում, որ «մտել են դիրքեր ու սպանել»:

Ծնողները իմացել են նաև, որ դեպքի վայրում եղել է նաև Դավիթ անունով ժամկետային զինծառայողը, որը դեպքի պահին թաքնված է եղել մահճակալի տակ: Վերջինս դեռևս գտնվում է ծառայության մեջ: Անդրանիկի ծնողները սպասում են Դավիթի գորացրվելուն, որպեսզի կարողանան մանրամասներ իմանալ դեպքի մասին³⁵:

- Կարո Այվազյանի մայրը դժգոհում է, որ քրեական գործից իրենց ոչ մի բան չեն ասում, եւ չեն ներգրավվում իրենց կամ որպես տուժողի իրավահաջորդի կամ որեւէ այլ կարգավիճակով:

Մայրը, պարբերաբար զրուցելով բանակում ծառայող որդու հետ, իմացել է, որ այնտեղ կատարվում են տարբեր անօրինական գործողություններ՝ փող են վերցնում զինծառայողներից, ճնշում են:

Մայրը բացառում է որդու կողմից սպանություն կատարելու վարկածը, քանի որ Կարոն ընկերներից պաշտպանելու համար կարող էր միջամտել, բայց ոչ զենքով, այլ բռունցքներով, եւ ինչու պիտի սպաներ ընկերներին:

Մի հանգամանք էւս. Կարո Այվազյանի մորեղբորը՝ Անուշավան Միքայելյանին, զորամասի պատասխանատուներից մեկը (ոչ պաշտոնական զրույցի ժամանակ) նախ ասել է, որ ակնատեսներից մեկը կենդանի է, այնուհետեւ զանգել է եւ հայտնել, որ մեկը գժվել է, իսկ երկուսը գտնվում են ահավոր վիճակում:

Հարազատները համոզված են, որ Կարոյի դատվածության հանգամանքը օգտագործելով, ուղղակի ուրիշի արածը Կարոյի գլխին են «սարքել», որովհետեւ սպանվածներից մեկի՝ Անդրանիկ Սարգսյանի կինը Կարոյի մասին միշտ լավն է լսել:

³⁴ <http://www.armtimes.com/15910>

³⁵ ՀՔԱ Վամաձորի գրասենյակի ստացված տեղեկություն



Կարո Այվազյանի մահվան ակտի տեղեկանքի մեջ նշված է. «Գլխուղեղի կենսական կարևոր ֆունկցիաների սուր խանգարում, գանգի հրազենային, գնդակային միջանցիկ վնասվածք, գանգի հիմի, թաղի բազմաբեկոր բաց կոտորվածքներ, գլխի մասնակի արտանկում, ջնջխում»:

Կ. Այվազյանի հարազատները տարակուսում են, որ Կարոյին սկզբից տարել են Հադրութ, հետո նոր բերել Երեւան՝ մերկ վիճակում: Կ Այվազյանի դիախերձումը կատարվել է Երեւանում, որին ներկա է եղել նրա քեռին: Վերջինս վկայում է, որ Կ. Այվազյանի դիակի վրա մեջքի ներքեւի հատվածում մեծ կապտուկ է եղել՝ 10 սմ շառավղով, մուգից բաց գնացող երանգով, եւ ենթադրվում է, որ խզակոթի հարված կարող է լինել, սակայն դիախերձելիս ասել են՝ դիակային կապտուկ է, որը կարող էր առաջանալ տեղափոխելու ժամանակ: Մասնագետների պնդմամբ չի կարող այդ կարգի կապտուկ առաջանալ: Այսինքն, Կ. Այվազյանին կենդանության օրոք հարվածել են³⁶:

- Ռոբերտ Հովհաննիսյանի մահվան վերաբերյալ քննիչները նշել են, որ նա զոհվել է այն պահին, երբ կրակոցների ձայնը լսելով, մոտեցել է դեպքի վայր:

Ռոբերտ Հովհաննիսյանը հանդիսացել է գումարտակի հրամանատարի տեղակալ Հովիկ Դանիելյանի վարորդը: Հարազատները համոզված են, որ Հ. Դանիելյանը մեղսակից է որդու սպանության մեջ:

Հարազատների հետ հանդիպումների արդյունքում պարզ է դառնում, որ պաշտոնական վարկածը հիմնավոր չէ, քանի որ զոհվածների դիակների վրա, բացի հրազենային վնասվածքներից, առկա են բռնությունների հետքեր: Երկրորդը, Գ. Հովսեփյանի ծնողները իրենց որդու հետ չեն կարողացել խոսել հուլիսի 28-ի առավոտից սկսած, իսկ Անդրանիկ Մարգարյանի մայրը որդու հետ խոսել է հուլիսի 28-ի երեկոյան: Այսինքն, պաշտոնական վարկածը, որ զինծառայողները մի տեղ են գտնվել, կասկածի տակ է առնվում: Երրորդը, քննիչները նկարագրում են, որ Կ. Այվազյանը մի ամբողջ «մագազին» փամփուշտ է օգտագործել, հետո վերցրել է մյուսը, ապա ՌՊԿ-ով (ручной пулемет калашникова) ինքն իրեն սպանել է: Մինչդեռ ՌՊԿ-ն երկար փող ունի, եւ նրանով ինքնասպանություն գործելու համար մարդը պետք է ունենա 190 սմ-ից ոչ պակաս հասակ, իսկ Կարոյի հասակը եղել է 165 սմ³⁷:

³⁶ http://www.hcav.am/articles.php/language_arm/date_2010-08-09/article_3720/page.html;
<http://www.zhamanak.com/article/15688/>

³⁷ http://www.hcav.am/articles.php/language_arm/date_2010-09-08/article_3752/page.html; <http://www.hraparak.am/2010/09/08/pn-lrutyan-qarasunqe/>



Գործի քննության ժամանակ կատարված 6 դիակների դատաբժշկական փորձաքննությունների, ինչպես նաև թվով 10 դատաձգաբանական, թվով 3 դատակենսաբանական փորձաքննությունների արդյունքները հարազատներին մինչ օրս չեն տրամադրել:

Չնայած նրան, որ դեպքից անցել է 6 ամիս, մահացածների ծնողների համար մինչև հիմա պարզ չէ, թե ինչ է իրականում կատարվել այդ օրը: Այդ իսկ պատճառով ծնողները որոշել են հանդիպել դեպքի միակ վկա՝ արդեն գորացրված երիտասարդի հետ:

Վերջինս պատմել է հետեւյալը. դեպքի օրը՝ հուլիսի 28-ին, 2 սպա բարձրացել են հենակետ եւ տեսել, որ հերթապահություն իրականացնող 2 զինծառայողները՝ Անդրանիկ Սարգսյանը եւ Կարո Այվազյանը, քնած են: Արթնացրել են զինվորներին եւ իջեցրել բլինդած՝ հերթապահության մեջ գտնվող սպա՝ Վարդգեղ Թադեւոսյանի մոտ: Վերջինիս հանձնարարել են, որպեսզի համապատասխան պատժամիջոց կիրառի զինվորների նկատմամբ:

Սպա Վարդգեւ Թադեւոսյանը, դառնալով զինվորներին, հարցրել է, թե գիտեն, թե ինչ է սպասվում այն զինվորի հետ, ով քնում է դիրքերում, զինվորները պատասխանել են, որ գիտեն:

Վ. Թադեւոսյանն էլ ավելացրել է. «Դե եթե գիտեք, հենց հիմա հանեք շալվարներդ»: Այդ խոսքից վրդովվել են այնտեղ ներկա մյուս զինծառայողները եւ սկսվել է քաշքշուկ:

Զինծառայող Ռոբերտ Հովհաննիսյանը վերցրել է ինքնաձիգը եւ բղավել, որ սպան հեռու գնա իր զինակից ընկերներից: Սպան, տեսնելով դա, հարձակվել է Ռոբերտի վրա, իսկ մյուս զինծառայողները առաջ են եկել եւ փորձել են բաժանել Ռոբերտին եւ սպային: Այդ պահին Կարո Այվազյանը վերցրել է մեկ այլ ինքնաձիգ եւ կրակել սպայի ուղղությամբ: Այդ քաշքշուկի մեջ հրազենի գնդակները դիպել են նաև մյուս զինվորներին: Գիտակցելով տեղի ունեցածը՝ Կարո Այվազյանը ինքնասպան է եղել³⁸:

Սակայն մի քանի օր հետո Անդրանիկ Սարգսյանի հայրը՝ Սարգիս Սարգսյանը, հերքել է բոլոր տեղեկությունները՝ նշելով, որ ինքը դրանք ասել է առանց ստուգման եւ որ ինքը հայցում է գոհվածների իրավահաջորդների, մասնավորապես՝ Վարդգեւ Թադեւոսյանի³⁹:

➤ Ներքին կանոնակարգի խախտման հետեւանքով մահացության հաջորդ դեպքը տեղի է ունեցել 2010 թվականի օգոստոսի 17-ին: ՀՀ պաշտպանության նախարարության զորամասի մարտական հենակետում պայմանագրային զինծառայող, կրտսեր սերժանտ, 1984

³⁸ <http://www.armtimes.com/22367>

³⁹ <http://www.armtown.com/news/am/arv/20110211/88524/>



թ. ծնված Հարություն Վարդանյանը հրազենային կրակոցով սպանել է նույն զորամասի պայմանագրային զինծառայող, կրտսեր սերժանտ, 1966թ. ծնված **Արսեն Չոբանյանին**:

Փաստի առթիվ ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայության 6-րդ կայազորային քննչական բաժնում ՀՀ Քրեական օրենսգրքի 104 հոդվածի 1-ին մասի հատկանիշներով /ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելը/ հարուցվել է քրեական գործ եւ կատարվում է նախաքննություն: Քրեական գործով նշանակվել են համապատասխան փորձաքննություններ: 2010թ. օգոստոսի 18-ին Հ. Վարդանյանին ձերբակալել են, և առաջադրել են մեղադրանք ՀՀ Քրեական օրենսգրքի 104 հոդվածի 1-ին մասով⁴⁰:

➤ ԼՂՀ 5-րդ պաշտպանական շրջանի 2-րդ հրաձգային գումարտակում գրանցվել է սպանության եւս մեկ դեպք: Առաջին դեպքը տեղի էր ունեցել 2010 թվականի հուլիսի 16-ին, երբ հրամանատարի հարվածի հետեւանքով սպանվել էր 22-ամյա ժամկետային զինծառայող Արման Ավագյանը⁴¹:

Նույն զորամասում 2010 թվականի սեպտեմբերի 20-ին զինվորական գետնատնակում մահացու վիրավորվել էր շարքային **Խոզրեկյանը**՝ շարքային Տիգրանյանի՝ «զենքի հետ անզգույշ վարվելու արդյունքում»: Ըստ պաշտոնական հաղորդմամբ՝ դեպքի հետ կապված տարվում է հետաքննություն⁴²:

➤ Ըստ պաշտոնական հաղորդագրության՝ 2010 թվականի սեպտեմբերի 25-ին ՀՀ պաշտպանության նախարարության հյուսիս-արեւելյան սահմանագոտում տեղակայված զորամասերից մեկի մարտական հենակետում 19-ամյա ժամկետային զինծառայող Գրիգոր Հովհաննիսյանի կողմից զենքի օգտագործման կանոնները խախտելու հետեւանքով մահացու վիրավորվել է նույն զորամասի ժամկետային զինծառայող, շարքային **Արթուր Մխիթարյանը**⁴³:

ՀՀ պաշտպանության նախարարության քննչական վարչության տեղեկատվության համաձայն՝ հարուցվել է քրեական գործ ՀՀ Քրեական օրենսգրքի 104 հոդվածի 1-ին մասով, իսկ Գրիգոր Հովհաննիսյանը ձերբակալվել է:

⁴⁰ <http://www.tert.am/am/news/2010/08/24/army>

⁴¹ <http://www.hraparak.am/2010/10/01/hayoc-banak-tuyl-oxaknere-patjvelen/>

⁴² <http://www.hraparak.am/2010/10/04/spanutyan-erkord-depge-nuyn-gumartakum/>

⁴³ <http://www.mil.am/arm/index.php?page=2&p=0&id=1551&y=2010&m=09&d=28>



Ըստ նույն գործադասի զինծառայողների՝ Ա. Մխիթարյանի եւ Գ. Հովհաննիսյանի միջեւ լարված կամ բարդ հարաբերություններ չեն նկատվել⁴⁴:

➤ 2010 թվականի հոկտեմբերի 3-ին ժամը 19:00-ի սահմաններում Լեռնային Ղարաբաղի Հաղործի գործադասի գորանոցի նկուղում հայտնաբերվել է նույն գործադասի շարքային զինծառայող, Արտաշատի զինկոմիսարիատից գորակոչված, 18-ամյա **Սամվել Խաչատրյանի** դին՝ կախված վիճակում: Ս. Խաչատրյանը 2010 թվականի սեպտեմբերի 13-ից ստորաբաժանման կազմում մասնակցում էր ճամբարային հավաքների:

Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ ՀՀ Քրեական օրենսգրքի 359 հոդվածի 3-րդ մասով՝ «զինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրքային կանոնները խախտելը նրանց միջեւ ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում, որն առաջացրել է ծանր հետեւանքներ»: Գործի քննությունն իրականացվում է ՀՀ ՊՆ Գլխավոր շտաբի պետի տեղակալ Վալերի Գրիգորյանի գլխավորությամբ⁴⁵:

ՀՀ Քրեական օրենսգրքի 375 հոդվածի 2-րդ մասով (իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը, որն անզուգույնությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ), 259 հոդվածի 1-ին մասով (զինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրքային կանոնները խախտելը նրանց միջեւ ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում, որն առաջացրել է ծանր հետեւանքներ) եւ 360 հոդվածի 1-ին մասով (զինծառայողին վիրավորանք հասցնելը) նախատեսված արարքները կատարելու կասկածանքով ձերբակալվել են գործադասի մարտկոցի հրամանատարը, պարտադիր ժամկետային ծառայող երեք սերժանտ եւ 6 շարքային զինծառայողներ⁴⁶:

Սամվել Խաչատրյանի հարազատները գտնում են, որ կատարվել է դաժան սպանություն:

Ս. Խաչատրյանը մահվանից մի քանի օր առաջ զանգահարել է ազգականին եւ ասել, որ դասերից մեկի ժամանակ հանկարծ քնել է եւ սպան, տեսնելով, որ Սամվելը քնած է, մոտեցել է, վիրավորել նրան եւ խփել:

Սամվել Խաչատրյանի մայրը եւս մեկ դեպք է հիշում. սեպտեմբերի 23-ին իրենց զանգահարում է Հակաօդային պաշտպանության պետը եւ ասում, որ Սամվելը չի ենթարկվում

⁴⁴ <http://www.armtimes.com/17369>

⁴⁵ <http://www.azatutyun.am/content/article/2175925.html>

⁴⁶ <http://www.lragir.am/armsrc/country39576.html>; «Ժամանակ» օրաթերթ, 19.02.2011թ



գործառնախի «ներքին կանոններին»՝ աման չի լվանում, ավել չի անում, եւ 4-5 հոգով ստիպել են Սամվելին, որ դիմում գրի եւ ստորագրի, որ ինքը հրաժարվում է ծառայելուց: Այդ զանգից մի քանի ժամ հետո նորից զանգահարում է ՀՕՊ պետը եւ ասում, որ ամեն ինչ հարթվել է:

Իսկ միջադեպից 7 ժամ առաջ նորից զանգահարում են Սամվելի ազգականին եւ ասում, որ Սամվելը խնդիրներ ունի, եւ վերջինս պատմում է, որ լվացարանում մի քանի զինծառայողներ ծեծել են իրեն: Դա է պատճառը, որ Սամվելի դիակի զննության ժամանակ հայտնաբերվել են 15-ից ավելի տարբեր աստիճանների վերքեր, վնասվածքներ՝ մեջքի, ոտքերի, ձեռքերի, գլխի վրա: Գլխին հասցված հարվածներն առաջացրել են արյան զեղում: Պարանոցի վրա եղել են 2 կապտագույն գծեր, խեղդելու հարմարանքների՝ պարանների հետքեր, որոնք էլ հաստատում են սպանության վարկածը⁴⁷:

➤ 2010 թվականի հոկտեմբերի 23-ին Երեւանի Էրեբունի ոստիկանության բաժինը ստացել է հաղորդում այն մասին, որ Գյումրի քաղաքում տեղակայված ՌԴ սահմանապահ վարչությունում գրանցվել է սպանության միանգամից երկու դեպք:

Ըստ տարածված հաղորդագրության՝ վարչության հանգստի սենյակներից մեկում հայտնաբերվել է նույն գործառնախի պայմանագրային զինծառայողներ, ՌԴ քաղաքացիներ **Արմեն Չախարյանի** եւ **Արթուր Ենոքյանի** դիակները՝ կտրած-ծակած բազմաթիվ վնասվածներով:

Քննությունը վարում է ՌԴ դատախազությանը կից քննչական կոմիտեի զինվորական քննչական բաժինը:

Նախնական որոշ տեղեկությունների համաձայն՝ սպանվածներից մեկը հարաբերություններ է ունեցել ամուսնացած կնոջ հետ, եւ հիմա քննիչները հենց այդ կնոջ ամուսնուն են կասկածում զինծառայողներին սպանելու հարցում⁴⁸:

Մեկ այլ աղբյուրի համաձայն՝ մահացածները ոչ թե ՌԴ, այլ ՀՀ քաղաքացիներ են, եւ որ նրանք սպանվել են ոչ թե հայտնաբերված վայրում, այլ վարչության շենքում: Կասկածելի է նաեւ այն հանգամանքը, որ ահազանգը ստացվել է Երեւան քաղաքի Էրեբունի ոստիկանության բաժնում⁴⁹:

Նոյեմբերի 3-ին ՌԴ

դատախազությանը կից հետաքննչական կոմիտեի ռազմական հետաքննության վարչության

⁴⁷ «Ժամանակ» օրաթերթ, 14 հոկտեմբերի 2010թ.

⁴⁸ <http://zhamanak.com/news/12525/>

⁴⁹ «Ժամանակ», 29.10.2010



մամուլի ծառայությունը հայտնել է, որ զինծառայողների սպանության համար կասկածվող անձը ձերբակալվել է: Ձերբակալվող անձը ՀՀ քաղաքացի է⁵⁰:

➤ 2010 թվականի նոյեմբերի լույս 18-ի գիշերը Գեղարքունիքի մարզի ճամբարակի գորամասում հրազենային վիրավորումից մահացել է Արմավիրի զինկոմիսարիատից գորակոչված, 23-ամյա ժամկետային զինծառայող, կրտսեր սերժանտ **Ռոբերտ Ավետիսյանը**:

Ռոբերտ Ավետիսյանը Երեւանի ագրարային համալսարանի շրջանավարտ էր, բանակ էր գորակոչվել 2009 թվականի աշնանը:

Ըստ նախնական տեղեկությունների՝ Ավետիսյանն արգելված գոտու առաջին գիծը հատելիս չի պատասխանել «պոստի» պահախմբի «ասա նշանաբառը» հրահանգին եւ շարժվել է դեպի երկրորդ «պոստի» ուղղությամբ: «Կանգնել» հրահանգին նույնպես չենթարկվելուց հետո հետեւել են կրակոցներ⁵¹:

Մեկ այլ աղբյուրի համաձայն՝ Ռոբերտ Ավետիսյանը հիվանդացել է ջրծաղիկով եւ բուժում է ստացել գորամասի բուժմասում: Հարազատների կարծիքով Ռոբերտը վերջին շրջանում գտնվել է հոգեբանական ծանր վիճակում: Ըստ նախնական տեղեկությունների՝ Ռոբերտին դուրս են կանչել գորամասից եւ կրակել նրա վրա: Արձակվել է առնվազն 5-6 գնդակ, ինչից նա տեղում մահացել է⁵²:

Մեկ այլ աղբյուրի համաձայն՝ Ռոբերտ Ավետիսյանի եւ գորամասի զինծառայողներից մեկի միջեւ մարտական հենակետում վեճ է սկսվել, ինչի հետեւանքով ժամկետային զինծառայողը կրակ է արձակել Ավետիսյանի վրա: Ըստ նախնական տվյալների՝ սպանողը գորակոչվել է 6 ամիս առաջ եւ շարքային զինծառայող է եղել⁵³:

Ըստ որոշ տեղեկությունների՝ դեպքից հետո գորամասը «փակվել է», այսինքն, արգելվել են բոլոր հեռախոսազանգերը, գորամաս էլուժուտը: Պատճառը՝ ինֆորմացիայի արտահոսքի բացառումն է: Զորամասում բազմաթիվ քննիչներ են գտնվել, որոնք հարցաքննել են գրեթե բոլոր զինծառայողներին՝ պարզելու դեպքի հանգամանքները:

50 <http://tert.am/am/news/2010/11/03/armeniarussia/>

51 http://lin.am/arm/armenia_right_2521.html

52 <http://www.lragir.am/armsrc/right40992.html>

53 <http://www.armtimes.com/19378>



Սպանված զինծառայողի դին նոյեմբերի 18-ին տեղափոխվել է Երեւան՝ դիակերծում եւ նշանակված փորձաքննություններ իրականացնելու նպատակով⁵⁴:

Ռոբերտ Ավետիսյանի մահվան վկայականում նշված է, որ նա ստացել է «կրծքավանդակի, որովայնի, պարանոցի, ձախ վերին ու ստորին վերջույթների համակցված հրազենային գնդակային միջանցիկ վնասվածքներ, ներքին արյունահոսություն, ներքին օրգանների վնասումներ»⁵⁵:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ Քրեական օրենսգրքի 104 հոդվածի 1-ին մասի հատկանիշներով՝ սպանությունը՝ ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելը⁵⁶:

Ռոբերտ Ավետիսյանի մահվան գործով ձերբակալվել են երկու շարքային զինծառայողներ՝ Հմայակ Մարտիրոսյանը եւ Արտյոմ Պողոսյանը: Վերջիններիս նկատմամբ մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 367 հոդվածի («Պահակային կամ կայազորային ծառայության կանոնագրքային կանոնները խախտելը») 2-րդ մասի հատկանիշներով՝ «պահակային կամ կայազորային ծառայության կանոնների նկատմամբ անփութ կամ անբարեխիղճ վերաբերմունք, որն առաջացրել է ծանր հետեւանքներ»⁵⁷:

Ռոբերտ Ավետիսյանի հայրը՝ Գուրգեն Ավետիսյանը, անընդունելի է համարում առաջադրված մեղադրանքը: Նրա կարծիքով իր որդուն մտադրված սպանել են:

«Ինչու պիտի Ռոբերտը, որը ջրծաղիկով հիվանդ էր եւ բուժում էր ստանում բուժմասում, բուժմասի համազգեստով, հողաթափերով բուժմասից գիշերը ժամը 1-ին դուրս գար, ինչ դրդապատճառներ պետք է ունենար նա», - տարակուսում է հայրը⁵⁸:

➤ 2010 թվականի նոյեմբերի 19-ին Լեռնային Ղարաբաղի Ջաբրայիլի գորամասի պահպանության տակ գտնվող առաջնային բնագծում տեղի է ունեցել միջադեպ: Միջադեպի հետեւանքով հրազենային կրակահերթերից զոհվել են ժամկետային զինծառայողներ **Լեւոն Եսայանը** (Տավուշի մարզ, քաղաք Բերդ), **Ներսես Գալոյանը** (Շիրակի մարզ, գյուղ Սպանդարյան), **Նարեկ Սահակյանը** (Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան), **Նվեր Սարգսյանը**

54 <http://www.armtimes.com/19378>

55 <http://www.lragir.am/armsrc/right41022.html>

56 <http://www.azatutyun.am/content/article/2224466.html>

57 <http://www.lragir.am/armsrc/right41173.html>

58 <http://www.azatutyun.am/content/article/2230097.html>



(Լեոնային Ղարաբաղ): Հրագենային տարբեր աստիճանի վիրավորումներ են ստացել ժամկետային զինծառայողներ՝ Մանվել Հազրոյանը (Արմավիրի մարզ, Նալբանդյան գյուղ), Մարգիս Մելքումյանը (Արմավիրի մարզ, գյուղ Գետաշեն), Խաչիկ Ալեքսանյանը (Գեղարքունիքի մարզ, գյուղ Աստղաձոր), Մասիս Գրիգորյանը (Լեոնային Ղարաբաղ, Մարտունու շրջան):

ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայությունը դեպքի կապակցությամբ հարուցել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի հատկանիշներով:

Որպես դեպքի պատճառ նշում են ձայնասկավառակի նվագարկիչը «CD player», որի պատկանելիության շուրջ չեն կարողացել ընդհանուր հայտարարի գալ եւ վիճաբանությունը շարունակել են դիրքերում⁵⁹:

Հրագենային տարբեր աստիճանի վիրավորումներ ստացած Խաչիկ Ալեքսանյանը, Մասիս Գրիգորյանը եւ Մանվել Հազրոյանը տեղափոխվել են Ստեփանակերտի զինվորական հոսպիտալ, իսկ Մարգիս Մելքումյանին տեղափոխել են Երեւանի կենտրոնական զինվորական հոսպիտալ, որտեղ կատարել են երկու վիրահատություն: Նա ձախ ձեռքի բազմաբեկորային կոտրվածքից բացի հրագենային վնասվածք է ստացել կրծքավանդակի շրջանում, վնասվել է աջ թոքը: Հոսպիտալում կատարել են երկու վիրահատություն:

Մանվել Հազրոյանը ստացել է 4 հրագենային վնասվածք, որից 3-ը՝ որովայնի շրջանում, մեկը՝ գլխի: Դեպքից անմիջապես հետո նրան տեղափոխել են Ստեփանակերտի զինվորական հոսպիտալ:

Մանվել Հազրոյանին նոյեմբերի 23-ին մեղադրանք է առաջադրվել Քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի առաջին կետով՝ երկու եվ ավելի անձանց սպանության համար, 34-104 հոդվածի 2-րդ մասի առաջին կետով՝ երկու եվ ավելի մարդկանց սպանության փորձի համար եւ 365 հոդվածի 1-ին մասով՝ մարտական ծառայությունը կրելու կանոնները խախտելու համար: Նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է կալանավորումը⁶⁰:

Ըստ Պաշտպանության նախարարության քննչական ծառայության՝ Մանվել Հազրոյանը ընդունել է իր մեղքը:

Մ. Հազրոյանի հայրը՝ Արմեն Հազրոյանը նշում է, որ առողջական ծանր վիճակում գտնվող տղայի վրա հեշտ էր ճնշում գործադրելը: Նա հազիվ էր գիտակցության եկել, երբ

⁵⁹ <http://www.hraparak.am/2010/11/23/krakele-mankutyana-enkere/>

⁶⁰ <http://www.azatutyun.am/content/article/2228980.html>



վերակենդանացման բաժնից նրան տարան առանձին սենյակ՝ իրենց բերած փատաբանի եւ 7-8 հոգի զինվորականների հետ, որոնք հսկում էին Մանվելին, որտեղ Մանվելը, իբր, ընդունել է իր մեղքը:

«Մանվելն ի վիճակի չէր խոսել, նրա վիճակը բավականին ծանր է եղել: Երբ նարկոզից դուրս է եկել, ինձ մի քանի րոպե հետո նոր ճանաչել է», - նշում է հայրը:

Հոր համար անհասկանալի է նաեւ այն, թե ինչպես է իր որդին 7 հոգու գնդակահարել: Ըստ զինվորականների՝ միջադեպի ժամանակ կրակվել է 2 տարբեր զենքերից՝ ավտոմատից եւ գնդացիից: Այդ նույն զինվորականների վարկածի համաձայն՝ Մանվել Հազրոյանը 7 հոգու վրա կրակել է ավտոմատից, իսկ ինքն իրեն կրակել է գնդացիից: Վերջինս ամրագրված է եղել զինծառայող Մանվել Հազրոյանին:

Մանվել Հազրոյանի հարազատները համոզված են, որ Մանվելը չէր կարող գլխին հասցված վնասվածքներից հետո վնասվածքներ հասցնել նաեւ ինքն իրեն որովայնի շրջանում⁶¹:

Խաչիկ Ալեքսանյանը, Մասիս Գրիգորյանը եւ Սարգիս Մելքունյանը քրեական գործով ճանաչվել են որպես տուժողներ եւ նրանց նկատմամբ զինվորական իրավապահների կողմից խիստ հկողություն է սահմանվել, մասնավորապես, Երեւանի Մուրացանի հոսպիտալում գտնվող Սարգիս Մելքունյանին գիշեր ու ցերեկ հսկում են, եւ որեւէ մեկն ազատորեն չի կարող մտնել նրա մոտ կամ տեսակցել⁶²:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ներգրավվել է փաստաբաններ Կարեն Թումանյանին եւ Էդմոն Մարուքյանին որպես Մանվել Հազրոյանի պաշտպաններ:

Փաստաբաններ Կարեն Թումանյանը եւ Էդմոն Մարուքյանը դեկտեմբերի 6-ին միջնորդություն են ներկայացրել Հաղորդի քննչական բաժնի՝ Մանվել Հազրոյանի նկատմամբ պաշտպանության միջոց կիրառելու վերաբերյալ:

Փաստաբանները միջնորդել են Մանվել Հազրոյանի նկատմամբ կիրառել պաշտպանության միջոց և նրան տեղափոխել Հայաստանի Հանրապետություն, ինչպես նաեւ նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու դեպքում տեղափոխել

⁶¹ <http://www.lragir.am/armsrc/right41125.html>

⁶² <http://www.lragir.am/armsrc/right41609.html>



Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության
«Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ⁶³:

Պաշտպանների այս միջնորդությունը բավարարվել է եւ Մանվել Հազրոյանին դեկտեմբերի 11-ին տեղափոխել են Երեւանի կայագործի զինվորական հոսպիտալում, որտեղ նա ստանում է բուժում⁶⁴:

Ե. Առողջական խնդիրների պատճառով մահվան դեպքեր

➤ 2010 թվականի հունվարի 9-ին ԼՂՀ Մարտակերտի զորամասերից մեկում, զորակոչվելուց 14 օր հետո, մահացել է Հրազդան քաղաքի բնակիչ, 18-ամյա ժամկետային զինծառայող **Նարեկ Նիկողոսյանը**:

Դատաբժշկական փորձաքննության համաձայն՝ կենդանության օրոք Ն. Նիկողոսյանը տառապել է սուր միելոբլաստային լեյկոզով՝ արյան քաղցկեղով, որն էլ հանդիսացել է նրա մահվան պատճառ:

Ըստ դատաբժշկական 1-ին փորձագիտական եզրակացության՝ կենդանության օրոք Նարեկն ունեցել է հիվանդությանը բնորոշ նշաններ:

Իսկ դատափորձագիտական 2-րդ եզրակացության մեջ նշված է եղել, որ Ն. Նիկողոսյանը չի տվել արյան ընդհանուր անալիզ, այդ պատճառով չեն կարողացել որոշել նրա լեյկոֆոբիան, եւ նա զորակոչվել է բանակ:

Ծնողների պնդմամբ, սակայն, Նարեկի մահվան հանգամանքերն ու պատճառները պարզ չեն:

Հարազատների խոսքերով դեպքի օրը՝ հունվարի 9-ին, Նարեկը խոսել է եղբոր հետ՝ ասելով, որ ամեն ինչ նորմալ է: Այդ զանգից 3 ժամ անց անձանոթը զանգահարել է Նարեկի եղբորը եւ հայտնել, որ Նարեկին տարել են հոսպիտալ, սակայն ծնողներին Հրազդանում հայտնել են, որ Նարեկը մահացել է:

⁶³ http://www.hcav.am/articles.php/language_arm/date_2010-12-07/article_3875/page.html

⁶⁴ <http://lragir.am/armsrc/right41835.html>



Ծնողների կարծիքով Նարեկ Նիկողոսյանը ոչ մի հիվանդություն չի ունեցել և բանակ գորակոչվելիս եղել է լիովին առողջ:

Ինչ վերաբերում է արյան ընդհանուր անալիզներին, ապա Նարեկի մոր՝ Նարինե Նիկողոսյանի խոսքերով, Նարեկը Հրազդան քաղաքում հանձնել է արյան ընդհանուր անալիզ, 4 ակտով հետազոտվել է բժշկական հանձնաժողովի կողմից:

Եթե նշվում է, որ Նարեկը կենդանության օրոք ունեցել է հիվանդությանը բնորոշ նշաններ, ապա ինչպես են Նարեկին գորակոչել բանակ:

Գործի առնչությամբ որևէ մեկին մեղադրանք առաջադրված չէ, քրեական գործ հարուցված չէ⁶⁵:

➤ 2010 թվականի հունիսի 3-ին Նոյեմբերյանի հիվանդանոց է տեղափոխվել 1969թ. ծնված, Երեւան քաղաքի բնակիչ, Նոյեմբերյանի Հաղթանակ գյուղում ժամանակավորապես բնակվող պայմանագրային զինծառայող **Դերենիկ Մանուկյանի** դին: Նա մահացել է ինֆարկտից⁶⁶:

➤ 2010 թվականի օգոստոսի 28-ին ժամկետային զինծառայող **Հակոբ Բաբուչյանին** տեղափոխել էին հոսպիտալ միզուղիների հետ խնդիրներ ունենալու պատճառով: Ըստ մամուլի հրապարակումների՝ Հ. Բաբուչյանը հոսպիտալում մահացել է ինֆարկտից⁶⁷:

Զ. Դժբախտ պատահարների հետևանքով մահացության դեպքեր

➤ 2010 թվականի հոկտեմբերի 12-ին Լեոնային Ղարաբաղի Հաղորութի գորամասերից մեկի սպայի վրա հարձակվել է գայլը, երբ նա տուն գնալիս է եղել: Հարձակման արդյունքում սպան մահացել է⁶⁸:

⁶⁵ http://tert.hraparak.am/hodvac.php?h_id=5073

⁶⁶ <http://www.tesankyun.am/society/216-41-ln-inse-lb-.html>

⁶⁷ <http://www.aravot.am/am/articles/politics/82687/view>

⁶⁸ <http://www.zhamanak.com/news/12398/>



➤ 2010 թվականի նոյեմբերի 11-ին Մեդրի քաղաքի Ծիրանաձոր թաղամասի հարակից սարից ձորն է ընկել 1990թ. ծնված ժամկետային զինծառայող, Արագածոտնի մարզի Նոր Ամանու գյուղի բնակիչ *Իշխան Մովսիսյանը*⁶⁹:

ՄԱՍ 2

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱՍՏԱՑՆՈՂ
ԵՎ ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ

⁶⁹ <http://ragir.am/armsrc/country40643.html>



Նման դեպքերի վերաբերյալ տեղեկատվությունը որպես կանոն մնում է չբացահայտված եւ անհասանելի:

2010 թվականի հունվարի 1-ից մինչեւ դեկտեմբերի 31 -ը լրատվական միջոցներով զինձառայողների նկատմամբ ֆիզիկական բռնությունների մասին տեղեկություն է տարածվել 10 դեպքի վերաբերյալ:

➤ 2010 թվականի ապրիլի 28-ին Արմավիրի 60925 զորամասում, ըստ պաշտոնական հաղորդագրության, ինքնախեղման նպատակով իրեն հասցված վնասվածքներով հոսպիտալ է տեղափոխվել զորամասի գումարտակի հրամանատար, փոխգնդապետ **Խոսրով Շադյանը**:

Փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայության չորրորդ կայագորային քննչական բաժնում ՀՀ Քրեական օրենսգրքի 110 հոդվածի (ինքնասպանության հասցնել) 2-րդ մասի հատկանիշներով (նույն արարքը, որը կատարվել է հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվող անձի նկատմամբ):

Ըստ ոչ պաշտոնական տվյալների՝ Խ. Շադյանը ծեծի է ենթարկվել վերադասի կողմից Պաշտպանության նախարարին հայիոյելու համար: Վերջինիս կապել են աթոռին, իսկ զինվորներին ստիպել են փոխգնդապետի կողքով քայլելիս վիրավորական արտահայտություններ ասել նրա հասցեին: Խ. Շադյանը կարողացել է ազատել կապված ձեռքերը եւ դանակով 4 անգամ հարվածել իրեն⁷⁰:

Հարազատների ստացված տեղեկատվության համաձայն՝ Խ. Շադյանը հոսպիտալում բուժվելուց հետո գտնվել է արձակուրդի մեջ , իսկ բռնությունների փաստով քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի ընթացքի մասին որեւէ պաշտոնական տեղեկատվություն չի հրապարակվել:

Նշենք, որ Խ. Շադյանի եղբայրը աշխատում է Մեծամորի ատոմակայանի անվտանգության ծառայությունում:

➤ ՀՀ պաշտպանության նախարարության թիվ 51191 զորամասի 3-րդ գումարտակի 9-րդ վաշտի 1-ին դասակի հրամանատար, ավագ լեյտենանտ, 27-ամյա Արման Ալոյանը 2010 թվականի օգոստոսի 11-ին, ժամը 08:30-ի սահմաններում 3-րդ գումարտակի

⁷⁰ <http://www.armtimes.com/8345>



շարահրապարակում վարժություններ կատարելու ժամանակ կոպիտ դիտողություն է արել եւ քաղաքէլ նույն գումարատակի 10-րդ վաշտի 3-րդ դասակի ժամկետային զինծառայող **Միմոն Առաքելյանի** համազգեստից: Վերջինս այդ կոպիտ դիտողության կապակցությամբ պատասխան է տվել Ալոյանին, ինչից հետո Ալոյանը սկսել է բռունցքով հարվածել Առաքելյանի դեմքին՝ քթի եւ ձախ աչքի շրջանին, որի հետեւանքով Միմոն Առաքելյանը ստացել է առողջության տեսական քայքայումով միջին ծանրության վնաս:

Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանն Ալոյանի միջնորդությամբ կիրառել է արագացված դատաքննություն եւ ՀՀ քրեական օրենսգրքի 375 հոդվածի 1-ին մասով դատապարտել 2 տարվա ազատազրկման:

Պատիժը սահմանելիս դատարանը հաշվի է առել այն հանգամանքը, որ Ալոյանը խոստովանել է իր մեղքը, զղջացել է կատարածի համար, ինչպես նաեւ խնամքին ունի մեկ մանկահասակ երեխա, եւ տուժողի կողմից էլ որեւէ պահանջ չի ներկայացվել:

Արման Ալոյանը բողոքարկել է առաջին աստիճանի դատավճիռը վերաքննիչ աստիճանի խնդրելով ավելի մեղմ պատիժ ու այն պայմանականորեն չկիրառել:

Ի դեպ, Արման Ալոյանը առաջին անգամ չէ, որ ենթարկվում է քրեական պատասխանատվության: Նա 2006 թվականի հունիսի 5-ին մեկ անգամ եւս դատվել է Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 356 հոդվածի 1-ին մասով (պետի օրինական հրամանը չկատարելը), ՀՀ քրեական օրենսգրքի 361 հոդվածի 3-րդ մասով (գորամասը, ծառայության վայրն ինքնակամ լքելը)՝ դատապարտվելով ազատազրկման մեկ տարի ժամկետով:

Սակայն այն ժամանակ ՀՀ քրեական օրենսգրքի 70 հոդվածի կիրառմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել եւ նշանակվել է փարձաշրջան մեկ տարի ժամանակով:

Իսկ 2006 թվականի հոկտեմբերի 16-ի Տավուշի մարզի առաջին աստիճանի դատարանի որոշմամբ, «ՀՀ անկախության հռչակման 15-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ ազգային ժողովի 07.07.06 թվականի որոշման 1-ին կետի «բ» ենթակետի կիրառմամբ, ազատվել է պատժի կրումից⁷¹:

➤ 2010 թվականի օգոստոսի 11-ին Լեռնային Ղարաբաղի Մարտունու գորամասի շարահրապարակում շարքով վազելու ժամանակ ժամկետային զինծառայող, շարքային Շահեն Աղայանը զինվորական գոտիով մի քանի անգամ հարվածել է ժամկետային զինծառայող,

⁷¹ «Ժամանակ» օրաթերթ, 14.12.10



շարքային **Մայիս Աղաբաբյանի** դեմքին՝ զուգորդելով նրա հասցեին հնչեցրած հայհոյանքներով: Մ. Աղաբաբյանը ուշագնաց է եղել, տեղափոխվել է Մարտունու հոսպիտալ, այնուհետև՝ Ստեփանակերտ, իսկ ավելի ուշ ՀՀ պաշտպանության նախարարության կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ:

Փաստի առթիվ ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայության առաջին կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ ՀՀ Քրեական օրենսգրքի 359 հոդվածի հատկանիշներով՝ զինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում, եւ Շահեն Աղաբաբյանի նկատմամբ մեղադրանք է առաջադրվել:

Աղաբաբյանի մոր խոսքերով՝ հարվածից վնասվել է որդու աչքը, սակայն, Երեւանի զինվորական հոսպիտալում որեւէ վիրահատական միջամտություն չեն իրականացրել: Մ. Աղաբաբյանը ստացել է միայն դեղորայքային բուժում, իսկ որոշ ժամանակ անց տեղափոխել են Կանադի հոսպիտալին կից գտնվող հոգեբուժական կլինիկա, քանի որ կոնտուզիայի հետեւանքով ստացել է հոգեկան խանգարում:

Չնայած այս ամենին, Աղաբաբյանին հետ են ուղարկել ծառայության⁷²:

➤ 2010 թվականի օգոստոսի 23-ին Լեռնային Ղարաբաղի Կուրաթլուի զորամասերից մեկում սպայական կազմի կողմից ծեծի է ենթարկվել զինծառայող **Վարուժան Դավթյանը**, որին անգիտակից վիճակում տեղափոխել են Մուրացանի զինվորական հոսպիտալ: ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայությունը հերքում է այդ հաղորդագրությունը⁷³:

➤ 2010թ. սեպտեմբերի 9-ին Արարատի զորամասերից մեկում ժամկետային զինծառայող, շարքային Վարդան Ներսիսյանը գնդակահարել է նույն զորամասի ժամկետային զինծառայող **Հովհաննես Բաղդասարյանին**: Ըստ պաշտոնական տեղեկության՝ Վարդան Ներսիսյանը հերթապահություն իրականացնելու ժամանակ, լսելով քայլերի ձայն, հարցրել է, թե ով է, եւ պատասխան չստանալով՝ կրակ է բացել: Հ. Բաղդասարյանը հրազենային վիրավորում է ստացել որովայնի շրջանում եւ նույն օրը վիրահատվել է:

⁷² <http://www.armtimes.com/ru/node/18656>

⁷³ <http://www.armtimes.com/16060>



Ըստ ոչ պաշտոնական տվյալների՝ վնասվածքի պատճառով Հ. Բաղդասարյանի ոտքը անդամահատել են, որը պաշտոնական աղբյուրները հերքում են⁷⁴:

➤ 2010 թվականի սեպտեմբերի 11-ին www.youtube.com կայքում տարածվել է տեսանյութ, որտեղ սպան նվաստացնում է 2 զինվորների՝ հարվածելով նրանց գլխին, ականջներին, ջուր լցնելով նրանց ականջների մեջ:

Ջինժառայողների միջև ոչ կանոնադրական փոխհարաբերությունների վերաբերյալ տեսանյութի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ Քրեական օրենսգրքի 375 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով:

Սեպտեմբերի 18-ին տեսանյութում զինժառայողներին ծեծի ենթարկող Սասուն Գալստյանին, որը Լեռնային Ղարաբաղի թիվ 38862 զորամասի 2-րդ մոտոհրաձգային գումարտակի հրամանատարի սպառազինության գծով տեղակալ, մայոր է, մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 375 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով եւ նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել էր կալանավորումը:

Ծեծի ենթարկված ժամկետային զինժառայողներ Գարիկ Հարությունյանին եւ Բակուր Եղիկյանին ճանաչել են որպես տուժողներ:

2010 թվականի նոյեմբերի 5-ին, ըստ ՀՀ պաշտպանության նախարարության քննչական վարչության տեղեկատվության, գործի նախաքննությունն ավարտվել է եւ գործն ուղարկվել է դատարան⁷⁵:

2010 թվականի դեկտեմբերին դատարանը Սասուն Գալստյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 375 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություն կատարելու մեջ (իշխանության չարաշահում, իշխանազանցություն կամ իշխանության անգործություն) եւ դատապարտել է 3 տարվա ազատազրկման⁷⁶:

➤ 2010 թվականի հոկտեմբերի 28-ին Նուբարաշենի զորամասերից մեկում զինժառայող զինժառայող Վաչիկ Սարգսյանը կարտոֆիլ մաքրելու ժամանակ դանակահարել է մեկ այլ զինժառայողի, որին տեղափոխել են հիվանդանոց: Վ. Սարգսյանը ձերբակալվել է:

⁷⁴ <http://www.armtimes.com/17369>;

<http://www.mil.am/arm/index.php?page=2&p=0&id=1561&y=2010&m=10&d=11>

⁷⁵ <http://www.azatutyun.am/archive/news/20101105/2031/2031.html?id=2211627>

⁷⁶ <http://www.news.am/arm/news/41151.html>



Դեպքի վերաբերյալ քրեական գործ հարուցելու մասին որեւէ տեղեկատվություն չի տարածվել⁷⁷:

➤ 2010 թվականի հոկտեմբերի 28-ին Նուբարաշենի գորամասի հրամանատարի տեղակալ Արմեն Բարեղամյանը դաժան ծեծի է ենթարկել 5- ամսյա ժամկետային զինծառայող, Գեղարքունիքի մարզի Նորատուս գյուղից գորակոչված 18-ամյա **Էրիկ Գրիգորյանին**:

Հարազատների խոսքերով Է. Գրիգորյանը հոկտեմբերի 28-ին չի մասնակցել առավոտյան նախավարժանքին, քանի որ ոտքը մեխ է մտած եղել: Ա. Բարեղամյանը դրա համար 1 ժամ 40 րոպե ծեծել է զինվորին, նույնիսկ վերջինիս ուշագնաց լինելու ժամանակ: Այնուհետեւ տարել է լվացարան, ջուր է լցրել վրան, որ ուշքի գա, եւ շարունակել է ծեծը՝ այս անգամ աթոռով:

Է. Գրիգորյանին բազմաթիվ կապտուկներով եւ վնասվածքներով՝ կոտրված քթով, գլխուղեղի ցնցումով, սալջարդերով, տեղափոխել են Սուրբացանի հոսպիտալ՝ դիմաճնտային բաժին:

ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայության 4-րդ կայագորային բաժնում դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ Քրեական օրենսգրքի 375 հոդվածի 1-ին մասով (պետի կամ պաշտոնատար անձի կողմից իշխանությունը կամ պաշտոնեական դիրքը չարաշահելը, իշխանազանցությունը կամ պաշտոնեական լիազորությունների սահմանն անցնելը)⁷⁸:

Ըստ ՀՀ պաշտպանության նախարարության քննչական վարչության տեղեկատվության՝ նոյեմբերի 4-ին Ա. Բարեղամյանը ձերբակալվել է: Մինչեւ ձերբակալության 72 ժամը լրանալը Բարեղամյանին կառաջադրվի մեղադրանք եւ դատարանը կորոշի խափանման միջոցի հարցը:

ՀՀ ՊՆ քննչական ծառայության տեղեկատվության համաձայն՝ Արմեն Բարեղամյանի դեմ ՀՀ Քրեական օրենսգրքի 375 հոդվածի 1-ին մասով ամիսներ առաջ նույնպես մեղադրանք է առաջադրվել մեկ այլ զինվորի՝ շարքային Բագրատ Եղիշյանին ծեծելու համար, և գործը հոկտեմբերի 18-ին ուղարկվել է դատարան⁷⁹: Խափանման միջոց ընտրվել էր ոչ թե կալանքը, այլ չհեռանալու մասին ստորագրությունը⁸⁰:

⁷⁷ <http://zhamanak.com/news/12583/>

⁷⁸ <http://www.tert.am/am/news/2010/11/03/hraparak2/>

⁷⁹ <http://lragir.am/armsrc/right40418.html>

⁸⁰ <http://www.azatutyun.am/content/article/2211410.html>



➤ 2010 թվականի հոկտեմբերի 10-ին Նուբարաշենի գորամասերից մեկում ժամկետային զինծառայող, շարքային Վաչիկ Սարգսյանը դանակահարել է Վայոց ձորի մարզի Գետափ գյուղից գորակոչված, Նուբարաշենի հատուկ ջոկատի զինվոր, 20-ամյա **Անդրանիկ Արամյանին**:

Դանակահարության պատճառն անեկդոտն է եղել: Անդրանիկ Արամյանը ապարանցու մասին անեկդոտ է պատմել, ինչից վիրավորվել է նրա ապարանցի զինակից ընկերը՝ Վաչիկ Սարգսյանը: Վերջինս դանակով հարվածել է Անդրանիկին, ինչի արդյունքում կտրվել է Անդրանիկի թեւից սիրտ գնացող զարկերակը: Նրան շտապ տեղափոխել են Երեւանի կենտրոնական զինվորական հոսպիտալ, որտեղ վիրահատություն են արել, որը, սակայն անհաջող է անցել, սխալ բուժում են նշանակել:

Անդրանիկ Արամյանի քրոջ խոսքերով վիրահատությունից հետո Անդրանիկի վիճակը վատացել է, իսկ բժիշկները ոչ մի օգնություն չեն ցուցաբերել, ինչն էլ պատճառ է հանդիսացել, որ Անդրանիկին երկրորդ անգամ վիրահատեն: 2010 թվականի նոյեմբերի 19-ին Անդրանիկին տեղափոխել են «Արմենիա» հանրապետական բժշկական կենտրոնի անոթային վիրաբուժության բաժին, որտեղ կատարել են վիրահատություն: Բժիշկները, սակայն, ոչ մի հույս չեն տվել, որ վնասված ձեռքի աշխատունակությունը կվերականգնվի:

2011 թվականի փետրվարի կեսերին Անդրանիկը տեղափոխվել է կուրորտաբանության եւ ֆիզիկական բժշկության գիտահետազոտական ինստիտուտ՝ հույս ունենալով ֆիզիկական բժշկության միջոցով վերականգնել վերին վերջույթի շարժունակությունը:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ: Վաչիկ Սարգսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112 հոդվածի 1-ին մասով՝ դիտավորությամբ մարմնական վնասվածք պատճառելը կամ առողջությանն այլ ծանր վնաս պատճառելը, որը վտանգավոր է կյանքի համար կամ առաջացրել է տեսողության, խոսքի, լսողության կամ որևէ օրգանի կամ օրգանի ֆունկցիայի կորուստ..., ինչպես նաև կյանքի համար վտանգավոր այլ վնաս է պատճառել առողջությանը կամ առաջացրել է դրա քայքայում՝ զուգորդված ընդհանուր աշխատունակության ոչ պակաս, քան մեկ երրորդի կայուն կորստով կամ հանցավորի համար ակնհայտ մասնագիտական աշխատունակության լրիվ կորստով, պատժվում է ազատազրկմամբ 3-7 տարի ժամկետով:

Նախաքննությունն ավարտվել է, եւ գործը գտնվում է Էրեբունի եւ Նուբարաշեն



վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում: Առաջիկա նիստը նշանակված է 2011 թվականի մարտի 10-ին:

Անդրանիկ Սարգսյանի քրոջ խոսքերով մի քանի անգամ իրեն զանգահարել են փակ հեռախոսահամարից եւ սպառնացել, որ չբողոքի, հակառակ դեպքում կշլեն եղբոր կյանքը:

Ոչ պաշտոնական տեղեկությունների համաձայն Վաչիկ Սարգսյանը շարունակում է ծառայությունը նույն գործնաստում, նրա նկատմամբ որեւէ խափանման միջոց չի կիրառվել⁸¹:

➤ 2010 թվականի նոյեմբերի 19-ին Լեռնային Ղարաբաղի Հաղորդի գործնասի պահպանության տակ գտնվող առաջնային բնագծում տեղի է ունեցել միջադեպ: Միջադեպի հետեւանքով հրազենային կրակահերթերից զոհվել են ժամկետային զինծառայողներ Լեւոն Եսայանը (Տավուշի մարզ, քաղաք Բերդ), Ներսես Գալոյանը (Շիրակի մարզ, գյուղ Սպանդարյան), Նարեկ Սահակյանը (Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան), Նվեր Սարգսյանը (Լեռնային Ղարաբաղ): Հրազենային տարբեր աստիճանի վիրավորումներ են ստացել ժամկետային զինծառայողներ՝ **Մանվել Հազրոյանը** (Արմավիրի մարզ, Նալբանդյան գյուղ), **Մարգիս Մեքրուկյանը** (Արմավիրի մարզ, գյուղ Գետաշեն), **Խաչիկ Աղեքսանյանը** (Գեղարքունիքի մարզ, գյուղ Աստղաձոր), **Մասիս Գրիգորյանը** (Լեռնային Ղարաբաղ, Մարտունու շրջան):

Միջադեպի, ինչպես նաեւ վիրավորների առողջական վիճակի մասին մանրամասները եւ նախաքննության ընթացքը ներկայացված են տեղեկանքի **Մաս 1-ում**՝ «Կանոնադրային հարաբերությունների խախտման հետեւանքով մահացության դեպքերը» բաժնում:

⁸¹ http://www.lin.am/arm/armenia_society_10347.html ;
http://lin.am/arm/armenia_society_2426.html



ԱՄՓՈՓՈՒՄ

Տեղեկանքում ուսումնասիրված դեպքերի վիճակագրության ամփոփումը ներկայացված է աղյուսակների տեսքով:

Ըստ աղյուսակների՝ կարելի է հանգել հետևյալ եղրակացություններին.

1. *Չինված ուժերում մահացության 42 դեպքերից միայն 10-ի դեպքում է ՀՀ պաշտպանության նախարարությունը հանդիսացել որպես տեղեկատվության անմիջական աղբյուր*

2. *Մահացության դեպքերի գերակշիռ մասը պայմանավորված է ոչ թե հրադադարի ռեժիմի խախտմամբ, այլ ներքին հանցագործություններով*

3. *Չնայած 2008 թվականի համեմատ մահացության դեպքերի բացարձակ թիվը նվազել է, սակայն գտնվում է 2006-2007 թթ մակարդակին*

4. *Չնայած ՀՀ գլխավոր դատախազության/զինվորական դատախազության պաշտոնական ամփոփագրերում ներկայացնում են ոչ մահացու ելքերով հանցագործությունների (անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, բռնությունների) ավելի մեծ թիվ, այնուամենայնիվ, լրատվական միջոցներով դրանց լուսաբանումը անհամեմատ քիչ է*